ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

<<ԱՐԵՎՄՏՅԱՆ ԿԱՆԻ>>

ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ, Կոտայքի մարզ, Մրգաշեն 7 փող., 6 շ., բն. 3 (2408), Հեռ. +374 93 860339 artak78@yandex.com

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ

ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ԿԱՌԼԵՆ ՄԿՐՏՉՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Մկրտչյան

Դեռևս 2022թ-ին, «ԱՐԵՎՄՏՅԱՆ ԿԱՆԻ» ՍՊ ընկերությունը դիմել էր Արտաշատ և Մասիս համայնքների ղեկավարներին՝ ՀՀ Արարատի մարզի Նորամարգ-Հրազդանի կոպճային ավազների երևակման սահմաններում 2022-2023թթ երկրաբանական ուսումնասիրության աշխատանքներ իրականացնելու նպատակով:

Սահմանված կարգով երկրաբանական ուսումնասիրություններ իրականացնելու թույլտվություններ ստանալուց և համապատասխան աշխատանքներ իրականացնելու արդյունքում, ՀՀ ՏԿԵ նախարարի 17.07.2023թ. թիվ 1391-Ա հրամանով հաստատվել են ավազի հանքավայրի պաշարները:

Ներկայումս Ընկերությունը ցանկություն ունի շարունակելու ընդերքօգտագործման գործունեությունը և նախատեսում է ՇՄԱԳ դրական եզրակացություն ստանալուց հետո դիմել ՏԿԵՆ՝ ընդերքի արդյունահանման թույլտվություն ստանալու նպատակով, որի համար, ի թիվս այլնի անհրաժեշտ է ապահովել նաև հանրային իրազեկման և հանրային քննարկումներ կազմակերպելու օրենսդրությամբ սահմանված պահանջները ևս:

Նկատի ունենալով, որ ընդերքօգտագործման համար հայցվող տարածքն ընդգրկում է ՀՀ Արարատի մարզի երկու համայնքների՝ Մասիս խոշորացված համայնքի Նորամարգ և Արտաշատ խոշորացված համայնքի Հովտաշեն բնակավայրերը, ուստի ՀՀ Կառավարության 2014թ. նոյեմբերի 19-ի թիվ 1325-Ն որոշմամբ հաստատված Կարգի 7-

րդ կետի համաձայն, հանրային ծանուցման և քննարկումների կազմակերպումն իրականացնում են ձեռնարկողը և համայնքների ղեկավարները՝ համատեղ (երկու հողամասերն էլ սեփականության իրավունքով պատկանում են Ընկերության մասնակից, ՀՀ քաղաքացի՝ Ռուզվելտ Մինասի Մազմանյանին):

Այդ նպատակով «Արևմտյան Կանի» ընկերությունը 18.08.2023թ. գրավոր դիմել է Մասիս խոշորացված համայնքի ղեկավարին՝ ընդերքի արյունահանման թույլտվություն ստանալու հանրային լսումները Արտաշատ խոշորացված համայնքի ազդակիր՝ Հովտաշեն բնակավայրում իրականացնելու խնդրանքով, որի կապակցությամբ Մասիս խոշորացված համայնքի ղեկավար՝ Դ.Համբարձումյանը, 23.08.2023թ. թիվ 5738 գրությամբ տվել է իր համաձայնությունը:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ Օրենքի (21.06.2014թ. ՀՕ-110-Ն) 13-րդ և 26-րդ հոդվածների, ինչպես նաև ՀՀ կառավարության 2014թ. նոյեմբերի 19-ի թիվ 1325-Ն որոշմամբ հաստատված կարգի 13-14-րդ կետերի պահանջներով՝ խնդրում եմ կազմակերպել «Արևմտյան Կանի» ՍՊԸ կողմից հանրային քննարկման ներկայացված ընդերքի արդյունահանման գործունեություն իրականացնելու սույն նախաձեռնության 1-ին փուլի հանրային ծանուցումն ու լսումները:

Միաժամանակ խնդրում եմ հանրային քննարկումների վայրն ու ժամը սահմանելիս հաշվի առնել նաև «Արևմտյան Կանի» ՍՊԸ կարծիքը ևս:

Կից ներկայացնում եմ՝

- Ընկերության պետռեգիստրի վկայականը՝ « 2 » թերթ,
- Հողամասերի սեփականության իրավունքի վկայականների և սեփականատիրոջ անձնագրի պատճենները՝ « 6 »,
- Նախատեսվող գործունեության հակիրճ նկարագիրը՝ « 6 » թերթ
- Ընկերության՝ 18.08.2023թ. և Մասիսի համայնքի ղեկավարի՝ 23.08.2023թ. թիվ 5738 գրության պատճանները՝ « 3 » թերթ:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ՏՆՕՐԵՆ՝ ԱՐՏԱԿ ՂՈՒԿԱՍՅԱՆ

« 24 »օգոստոսի2023

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՐԶ ԿՈՏԱՅՔ ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
РЕСПУБЛИКА АРМЕНИЯ МАРЗ КОТАЙК ОБЩЕСТВО С ОГРАНИЧЕННОЙ ОТВЕТСТВЕННОСТЬЮ
REPUBLIC OF ARMENIA MARZ KOTAYK LIMITED LIABILITY COMPANY
АРЕВМТЯН КАНИ
ԱՐԵՎՄՏՅԱՆ ԿԱՆԻ
AREVMTYAN KANI
03560015